

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH

666 Richmond Road
Cleveland, Ohio
44143, U.S.A.

Area Code 216—Tel. 381-6590

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխվկէնտ, Օհայո

8 Հոկտ. '81

Գեր . Տ . Թորգոմ Արք . Մանուկեան , Առաջնորդ
Առաջնորդարան Հայոց , որ ի նիւ Եորք , ն . Ե . .

Գեր . Արքազան Հայր ,

Գրեթէ ամիս մը մնաց մեր եկեղեցւոյ համայնքին ձեր հովուական այցելու-
թիւնը տալու համար , Յոյ . 7-8 , Եաբաթ եւ Կիրակի օրերուն :

Այսու ըստ ձեր փափաքին կը փութանք տեղեկացնել ձեզի կարգ մը կարգադրու-
թեանց մասին ձեր այցելութեան առնչութեամբ :

Եաբաթ երեկոյեան կը փոխադրուիք եկեղեցւոյս մերձակայքը գտնուող "Հօլի-
տէյ Ին" պանդոկը եւ նոյն երեկոյեան ճաշկերոյթ մը կ'ունենանք Ծխական Խոր-
հուրդին եւ եկեղեցապատկան այլ կազմակերպութեանց ներկայացուցչաց հետ
միասին : Ճաշին կը հետեւի խորհրդակցական ժողով մը ձեր նախագահութեամբ
եւ Ծխական Խորհուրդի ու ներկայներու մասնակցութեամբ , եկեղեցիս շահագըր-
զը ողջ հարցերու մասին , հետեւելով ձեր թելադրութեան :

Իսկ Կիրակի օրը , առաւօտեան՝ եկեղեցական պաշտամունք , Եպիսկոպոսական
պատարագով եւ քարոզխօսութեամբ , դուք ըլլալով օրուան հիւր պատառագիչն
ու քարոզիչը , ժամը 10.15-12.30 : Ս . "ատարագին կը յաջորդէ պաշտօն չո-
գեհանգստեան : Նաեւ ի յաւելումն վերոյիշեալին , ծխական Խորհուրդս փա-
փաք յայտնած է որ եկեղեցւոյս Ս . խորհրդին ծառայող զոյգ երիտասարդաց
ուրարակիրի աստիճան տրուի , այսինքն ուրար կրելու իրաւունք շնորհէք
իրենց , քանի որ արդէն իսկ խորանին վրայ այդ ծառայութիւնը կը մատուցա-
նեն : Տիրացուներուն անուններն են՝ Հայկ Արքանեան եւ Գրիգոր Ղազարեան :
Եթէ համաձայն էք այս շնորհաբաշխութեան այն ատեն ես իրեն իմաց կուտամ :

Եկեղեցական արարողութեանց ամիջապէս կը յաջորդէ ճաշկերոյթ եւ Յայ-
տագիր , եկեղեցւոյս յարակից Մշակութային սրահին մէջ , ժամը 1.00-ին ,
որ թերեւս մինչեւ ժամը 4.00 տեւէ : Անշուշտ գլխաւոր խօսողը դուք կ'ըլ-
լաք այս ճաշկերոյթին : Այս հիման վրայ կրնաք որոշել ձեր մեկնումի թը-
ւականը եւ ժամը , զայն կարգադրելով Կիրակի երեկոյեան կամ Երկուշաբթի
առաւօտեան , ըստ ձեր փափաքին :

Յուսալով որ վերոյիշեալ տեղեկութիւնը ձեզ կը գոհացնէ առժամապէս ,

Մնամք Ողջունիւ Սիրոյ
եւ մատչելով ի համբոյր ձեր Աշոյն ,

Խոնարհ Աղօթակից ,

Ս. Տիրան Բհնյ . Փափագեան

Ս . Տիրան Բհնյ . Փափագեան , Հովիւ